ԱՇԽԱՐՀԻ ԲՈԼՈՐ ՀԱՅԵՐԻՆ

Հայ ժողովուրդը հին ու նոր մարդկային պատմության ամենից բազմաչարչար ժողովուրդներից մին է։ Ան տոկաց շատ ու շատ ռազմաշունչ ժողովուրդներու և զորավարներու ոտնձգություններուն, պետական բարձրաստիճան գործիչներու նենգ քաղաքականությանը, կազմակերպված կամ ինքնաբուխ խռովություններուն ու վերջապես 19-րդ և 20-րդ դարերի մեծագույն ցեղասպանություններուն։ Հիմա ան կրկին ենթարկված է հպածանքների ու ոչնչացումի Խորհրդային Միության սահմաններեն ներսն— Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի որոշ շրջաններուն մեջ։

Ինչո՞ւ։ Մինչև ե՞րբ։

Ես կդիմեմ աշխարհի բոլոր հայերուն, կոչ ուղղելով, որ ցուցաբերենք ավելի մեծ ակտիվություն՝ ի պաշտպանություն հայկական հարցի լուծումին։ Ես ամբողջովին կգիտակցեմ, խնդրի բարդությունը, բայց և համոզված եմ, թե ան կրնա գտնել իր արդար լուծումը միայն մեր բոլորիս գործուն մասնակցությամբ։ Անշուշտ, այս փուլին հարկավոր է մեր ջանքերը ուղղենք դեպի Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի մյուս հայաբնակ շրջաններու մեջ ծագած կոնֆլիկտի արագ ու պաշմանականորեն արդար լուծումը։

Այս կոչը ուղղելու բուն առիթը ԽՍՀՄ արեզիդենտ պրն. Մ. Ս. Գորբաչովի դիրքորոշումն է, որ ան արտահայտեց ԽՄԿԿ XXVIII համագումարին իր արտահայտած փակման խոսքի մեջ։ «Պրավդա» թերթը իր 194-րդ թվին մեջ (1990 թ. 18 հուլիսի) գրեց, թե ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարը, տեղեկացնելե հետո համագումարի պատգամավորները ԼՂԻՄ-ին մեջ որության ա հայ «ազգայնամոլ» մարտիկներու ագրեսիվ գործողություններու մասին, գաղտիար է հայտնած. համագումարը տա այս գործողություններու քաղաքական գնահատականը։

Նախագահի դիրքավորումը կտրական է, սակայն միակողմանի։ Մի՞թե հիմա ամենակարևորն է «քաղաքական գնահատական» տալը այն բարդ իրադարձություններու նրկատմամբ, որոնց հանդեպ պարոն արեզիդենտը ցույց է տված իր կողմնակալությունը։ Ժողովրդավարականորեն տրամադրված մարդկությունը. այդ թվին նաև, հուսով եմ, աշխարհի համայն հայությունը անորմն կսպասեն ոչ թե քայլեր, որպեսզի կասեցվեն Հայաստանի ու Ադրբեջանի միջև թշնամանքի նոր հրահրած այս օջախները, եթե ան իսկապես կաշխատի Խորհրդային Միության դեմոկրատացումին համար։

Հայ ժողովուրդը բազմիցս կոտորված է դարերու ընթացքին։ Այդ պատճառով անոր մեծամասնությունը կիսած է վտարանդիության, գաղթականության ճակատագիր։ Սակայն այդ գաղթականները այսօր արդեն ուժ կներկայացնեն։ Անոնք կան Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի, Իտալիայի և Կանադայի, Լիբանանի ու Արգենտինայի, Սիրիայի ու Բրազիլիայի, Հունաստանի ու Ավստրալիայի, Անգլիայի ու Եգիպտոսի, Ավստրիայի ու Գերմանիայի և, վերջապես, Պուլկարիայի մեջ։ Անոնք ոչ միայն ուժով են, այլ ազատ՝ ընտրելու Լեռնային Ղարաբաղի ու Ադրբեջանի հայության հանդեպ ցուցաբերված անարդար քաղաքականության դեմ պայքարի ձևերն ու միջոցները։ Ես աղ մեկն եմ այդ շատերեն ու կհամարձակիմ հարց ուղղել՝ ինչո՞ւ չձեռնարկվեցան վճռական միջոցներ Խորհրդային երկրուն մեջ հայերուն հանդեպ ամենանոր ցեղասպանությունն կատարողներուն դեմ, երբ Սումգայիթի, Բաքուի մեջ կոտորվեցան, խոշտանգվեցան հարյուրավոր հայեր։

Ես համոզված եմ, որ արն. Գորբաչովը չէ տեսած վերջին վտարանդի հայերը։ Ես չեմ կրնար մոռանալ այս տարվա մայիսի 29-ին տեսած սրտաճմլիկ տեսարանը, Մոսկվայի նշանավոր Լաստարյան ճեմարանի սենյակները, միջանցքները, բակը, սանդուղքները խառնված տառապյալ ծերերու ու երիտասարդներու, այրերու ու կիներու, մայրերու ու երեխաներու տխուր ու հուսահատ դեմքերը։

Հայ եղբայրներ ու քույրեր Հայաստանեն, Խորհրդային Միությունեն ու համայն աշխարհեն, լսեցեք իմ առաջարկը. մշակենք համատեղ ընդհանուր պահանջ՝ հղված ԽՍՀՄ ժողովրդական ռեպուտատներու համագումարին և իրենց անկախ հրաչական խորհրդային հանրապետություններու կառավարություններուն։

1. Ճանաչվի 1915 թվականի թուրք կառավարության իրագործած ցեղասպանությունը. ինչպես նաև Սումգայիթի (1988) և Բաքուի (1990) ցեղասպանությունները հայերու հանդեպ։

2. Անհապաղ տալ ազատ ինքնորոշման իրավունք Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչությանը։

Ձեր առաջարկները և պահանջները մերոհիշյալ հարցերու վերաբերյալ ուղարկել հետևյալ հասցեին. Պուլկարիա, Սոֆիա— 1080 փող., «Նայչո Ցանով», 81. «Երևան» կազմակերպություն։

Այլևս կարելի չէ սպասել։ Ապագա սերունդները մեզի չպիտի ներեն, եթե այսօր բոլորս միաձայն չպահանջենք, որ լուծվեն այս խնդիրները, որոնք կենսական նշանակություն ունին հայության պահպանման ու գոյատևման համար մեր մոլորակին վրա։

Պրոֆ., դոկտոր
Մարգիս ՍԱՐԳԻՍՅԱՆ
Նախագահ պուլկարահայ «Երևան»
կազմակերպության

Սոֆիա